



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունիսի 2017 թվականի N 847 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 678-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 18-ի «Տեսչական մարմինների էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ստեղծման, օգտագործման և վերահսկողություն իրականացնող մարմինների միջև տեղեկատվության փոխանակման, ինչպես նաև հանրությանը տեղեկատվություն տրամադրելու կարգը սահմանելու մասին» N 678-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) որոշման վերնագիրը «կարգը» բառից հետո լրացնել «և տեղեկատվության փոխանակման և կառավարման էլեկտրոնային համակարգի ներդրման միջոցառումների իրականացման քայլերի հաջորդականությունը» բառերով.

2) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը «հավելվածի» բառից առաջ լրացնել «N 1» թվով.

3) որոշման 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ սոր՝ 1.1-ին ենթակետով.

«1.1) տեղեկատվության փոխանակման և կառավարման էլեկտրոնային համակարգի ներդրման միջոցառումների իրականացման քայլերի հաջորդականությունը՝ համաձայն N 2 հավելվածի».

4) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում «ղեկավար-նախարար» բառերը փոխարինել «ղեկավար» բառով.

5) որոշումը լրացնել N 2 հավելվածով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

2017 թ. հուլիսի 21
Երևան

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



Հավելված N 2
ՀՀ կառավարության 2017 թվականի
հուլիսի 20-ի N 847 - Ն որոշման

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՅԼԵՐԻ
ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Պատասխանատու մարմինը	Միջոցառման իրականացման ժամկետը	Ֆինանսավոր- ման աղբյուրը
1	2	3	4	5	6
1.	Հիմնական+ (Basic+) ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) ձեռքբերում դոնոր կազմակերպությունից	ծրագրի փաստացի տնօրինում ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից	ՀՀ կառավարության աշխատակազմ	2017 թ. օգոստոսի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:
2.	Տեղեկատվության փոխանակման և կառավարման էլեկտրոնային համակարգի ներդրման նպատակով ծրագրի պատասխանատուի նշանակում և աշխատանքային խմբի ձևավորում	ծրագրի ղեկավարի նշանակման և աշխատանքային խմբի ստեղծման մասին իրավական ակտ	ՀՀ կառավարության աշխատակազմ	2017 թ. օգոստոսի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:
3.	Աշխատանքային խմբի կողմից տեսչական մարմինների գործունեությունը կարգավորող իրավական ակտերի վերլուծություն	ՀՀ իրավական ակտերի պահանջներին համապատասխան ծրագրի բիզնես գործընթացներ	ՀՀ կառավարության աշխատակազմ	2018 թ. մարտի 1-ին տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե դոնոր կազմակերպություններ
4.	Աշխատանքային խմբի կողմից ծրագրի տեղայնացման նախահաշվի կազմում և ֆինանսավորման հնարավոր աղբյուրների քաջահայտում	ծրագրի ներդրման նախահաշիվ	ՀՀ կառավարության աշխատակազմ	2018 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե դոնոր կազմակերպություններ
5.	Աշխատանքային խմբի կողմից ծրագրի տեղայնացման հաջորդական քայլերի մշակում	ծրագրի ներդրման գործողությունների պլան	ՀՀ կառավարության աշխատակազմ	2018 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե դոնոր կազմակերպություններ
6.	Ծրագրի ներդրման նախապատրաստական աշխատանքներ	ծրագրի տեղայնացման աշխատանքների ավարտ	ՀՀ կառավարության աշխատակազմ	2018 թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե դոնոր կազմակերպություններ

1	2	3	4	5	6
7.	Ծրագրի վերջնական տեղադրում ՀՀ կառավարության աշխատակազմում	ծրագրի գործարկում ՀՀ կառավարության աշխատակազմում	ՀՀ կառավարության աշխատակազմ	2018 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե դոնոր կազմակերպություններ
8.	Ծրագրի պիլոտային ներդրում	վերահսկողություն իրականացնող մեկ մարմնում ծրագրի գործարկում, հնարավոր թերությունների վերացում	ՀՀ կառավարության աշխատակազմ	2018 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե դոնոր կազմակերպություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

